ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010 Երևան Վ. Սարգսյան, հեռ. 594012
էլ. փոստ vigen.kocharyan@justice.am

10/14/10361
17.05.19

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 2019թ. մայիսի 14-ի թիվ GWZY-8KM0-RBYQ գրության՝ «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի Կոնվենցիայի վավերացման գործընթացին ուղղված միջոցառումների առնչությամբ հայտնում ենք հետևյալը.

Հարկ է նշել, որ դեռևս 2016 թվականից ՀՀ արդարադատության նախարարությունը սկսել էր «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի Կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) վավերացնելու գործընթացը, սակայն 2016թ. դեկտեմբերին ՀՀ վարչապետի հանձնարարականով վերահաստատվեց ՀՀ ԱԳՆ գրությամբ ներկայացված դիրքորոշումն առ այն, որ դեռևս վաղ է քննարկել Կոնվենցիային ՀՀ միանալու հարցը, քանզի Կոնվենցիան դեռ ուժի մեջ չի մտել և հստակ չեն Կոնվենցիայի 11-րդ հոդվածով նախատեսված Փորձագետների խմբի գործունեության մեխանիզմները և Կոնվենցիայի պրակտիկ կիրառման արդյունքները:

Տեղեկացնում ենք, որ ՀՀ արդարադատության նախարարությունը «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով նախատեսում է վերսկսել Կոնվենցիան վավերացնելու գործընթացը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՎԻԳԵՆ ՔՈՉԱՐՅԱՆ

ՀՀ ԱՆ միջազգային իրավական
համագործակցության վարչություն
Հեռ. (010) 594-176